

« Կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտե

Հարկային մարմնի գանգատարկման հանձնաժողով

Ո Ր Ո Շ ՈՒ Մ 14/3

22 մարտի 2013թ.

Քննարկման ընթացքում նշվեց, որ « ԿԱ ՊԵԿ հարկային մարմնի գանգատարկման հանձնաժողովի 12.03.2013թ-ի նիստում քննության է առնվել «Ա.Ի.Ալիխանյանի անվան ազգային գիտական լաբորատորիա (Երևանի ֆիզիկայի ինստիտուտ)> Հիմնադրամի 05.03.2013թ-ի թիվ 01-14/90 գրությամբ բերված բողոքը « ԿԱ ՊԵԿ Մաշտոցի ՀՏ 29.01.2013թ. թիվ 1008153 ստուգման ակտի դեմ: Արդյունքում ընդունվել է որոշման նախագիծ, որի համաձայն վերոգրյալ ստուգման ակտը թողնվել է անփոփոխ: Մասնավորապես.

համաձայն « ԿԱ ՊԵԿ նախագահի 01.11.2012թ. թիվ 1008153 հանձնարարագրի « օրենսդրությամբ հարկային մարմնին վերապահված իրավասության սահմաններում «Ա.Ի.Ալիխանյանի անվան ազգային գիտական լաբորատորիա (Երևանի ֆիզիկայի ինստիտուտ)> Հիմնադրամում (այսուհետ նաև Հիմնադրամ) կատարվել է բյուջեի հետ փոխհարաբերությունների և հարկային մարմնի կողմից վերահսկվող « օրենսդրության առանձին պահանջների կատարման ճշտության ստուգում: Արդյունքում 29.01.2013թ-ին կազմվել է թիվ 1008153 ստուգման ակտը (այսուհետ նաև ստուգման ակտ), որով լրացուցիչ գանձման է առաջադրվել ընդամենը 12.737.430 դրամ:

Հիմնադրամի ներկայացուցիչները նշեցին, որ բողոքը հիմնականում վերաբերում է ստուգման ակտով ոչ ռեզիդենտի շահութահարկի և ավելացված արժեքի հարկի գծով լրացուցիչ առաջադրված հետևյալ պարտավորություններին:

Ոչ ռեզիդենտի շահութահարկի գծով:

Շրջանակային համաձայնագրերով գնման ընթացակարգի կազմակերպման և անցկացման հետ կապված հարաբերությունները կարգավորվում են « Կառավարության 10.02.11թ. թիվ 168-Ն որոշմամբ հաստատված կարգի 41-րդ և 110-րդ կետերով: Մասնավորապես, 41-րդ կետի համաձայն գնումը շրջանակային համաձայնագրերի միջոցով իրականացնելու դեպքում հրավերը, էլեկտրոնային եղանակով, միաժամանակյա ծանուցմամբ ուղարկվում է տվյալ օրվա դրությամբ <gnumner.am> հասցեով ինտերնետային կայքում հրապարակված շրջանակային համաձայնագրեր կնքած բոլոր մասնակիցներին: Ընդ որում պետք է նկատի ունենալ, որ կայքում հրապարակված շրջանակային համաձայնագրերում բացակայում են վավերապայմաններ, որոնք պատվիրատուին հնարավորություն կտան որոշելու դրանք կնքած անձանց ռեզիդենտ և ոչ ռեզիդենտ լինելու հանգամանքը: Իսկ 110-րդ կետի համաձայն, շրջանակային համաձայնագիր կնքած անձը պատվիրատուին փակ ծրարով ներկայացնում է գնման ընթացակարգին մասնակցելու մասին դիմում և գնային առաջարկը (օրինակելի ձևերը հաստատված են հրավերով և պատվիրատուն իրավասու չէ փոփոխել այն), որոնցում ևս բացակայում են տվյալ մասնակցի ռեզիդենտ և ոչ ռեզիդենտ լինելու հանգամանքը որակելու վերաբերող վավերապայմաններ:

Կարծում ենք, որ տվյալ դեպքում խնդիրը պետք է դիտարկել ոչ թե պատվիրատուի գործողությունների ենթատեքստում, քանզի գնումների ընթացակարգերի կազմակերպման դաշտում վերջինիս իրավասությունները սահմանված են գնումների մասին « օրենսդրությամբ, այլ անհրաժեշտ է հանդես գալ նշված փաստաթղթերում փոփոխություններ կատարելու առաջարկությամբ, որոնք հնարավորություն կտան պատվիրատուին գնահատելու արձանագրված խնդիրները:

Ավելացված արժեքի հարկի գծով.

Հանգստյան տան մատուցած ծառայության մասով ֆիզիկական անձի կողմից հարկային հաշիվ չի պահանջվել, այդ իսկ պատճառով ԱԱՀ տեղեկանքում չի երևացել (երթ 100.000 դրամը գերազանցել): Այդ գումարները ներառված են 20%-ով հարկվող շրջանառության մեջ:

Ելնելով վերոգրյալից և հիմք ընդունելով «ՀՀ-ում ստուգումների կազմակերպման և անցկացման մասին» ՀՀ օրենքի 11-րդ հոդվածի 2-րդ մասի դրույթները Հիմնադրամը խնդրում է քննարկել ստուգման ակտի վերաբերյալ ներկայացված բողոքը և տալ համապատասխան պարզաբանում: Միաժամանակ տեղեկացվում է, որ ստուգման ակտով առաջադրված ամբողջ գումարը Հիմնադրամի կողմից վճարվել է պետական բյուջե:

«ԿԱ ՊԵԿ հարկային մարմնի գանգատարկման հանձնաժողովը (այսուհետ նաև Հանձնաժողով), հաշվի առնելով Հիմնադրամի ներկայացուցիչների և ստուգումն իրականացրած անձանց ներկայացված փաստարկները, ուսումնասիրելով սույն գործին առնչվող նյութերն ու ապացույցները եկավ եզրակացության, որ բողոքը հիմնավոր չէ:

Ստուգման ակտի 2-րդ կետով մասնավորապես արձանագրվել է.

ստուգմամբ պարզվեց, որ Հիմնադրամը «Երեքնուկ» ՍՊԸ-ից գրանցված ԼՂՀ-ում, 28.09.2011թ-ի թիվ 4121 հաշիվ-ֆարկտուրայով 371998 դրամ գումարով, 07.11.2011թ-ի թիվ 4975 հաշիվ-ֆարկտուրայով 136000 դրամ գումարով և 30.11.2011թ-ի թիվ 5475 հաշիվ-ֆարկտուրայով 13540076 դրամ գումարով կատարել է ապրանքների ձեռքբերումներ ՀՀ տարածքում և որպես հարկային գործակալ սահմանված կարգով չի իրականացրել ոչ ռեզիդենտ կազմակերպությանը վճարվող եկամտի ընդհանուր գումարից աղբյուրի մոտ շահութահարկի պահումը /գանձումը/ 10 տոկոս դրույքաչափով և բյուջե չի փոխանցել 1404807 դրամ շահութահարկ: Հետևաբար խախտվել են «Շահութահարկի մասին» ՀՀ օրենքի 53-րդ հոդվածի 2-րդ կետի «ա» ենթակետի, 57-րդ հոդվածի 1-ին կետի, 64-րդ և 66-րդ հոդվածների պահանջները:

Համաձայն «Հարկերի մասին» ՀՀ օրենքի 23-րդ, 24-րդ և 25-րդ հոդվածների դրույթների ընդամենը ենթակա է բյուջե վճարման 3.578.746 դրամ ոչ ռեզիդենտի շահութահարկ:

Ստուգման ակտի 5-րդ կետով մասնավորապես արձանագրվել է.

1. Հիմնադրամը խախտելով «ԱԱՀ-ի մասին» ՀՀ օրենքի 26-րդ հոդվածի 2-րդ կետի պահանջները՝ 2012թ. հունվար ամսվա ԱԱՀ-ի հաշվարկում հաշվանցման ենթակա ԱԱՀ-ի գումարներն ավել է հաշվարկել 877200 դրամի չափով, 2012թ-ի փետրվար ամսվա ԱԱՀ-ի հաշվարկում՝ 1532400 դրամի չափով և 2012թ-ի մարտ ամսվա ԱԱՀ-ի հաշվարկում 7300 դրամի չափով: Ընդամենն ավել հաշվանցում է կատարվել 2416900 դրամի չափով:

2. Հիմնադրամը խախտելով «ԱԱՀ-ի մասին» ՀՀ օրենքի 20-րդ հոդվածի պահանջները՝ դուրս գրված և մատակարարներից ստացված հարկային հաշիվների վերաբերյալ տեղեկանքներում չի ներառել որպես գնորդ մատակարարներից ստացված թվով չորս հարկային հաշիվների համար տեղեկությունները, որոնք նաև չեն հաշվանցվել:

3. Հիմնադրամը խախտելով «ԱԱՀ-ի մասին» ՀՀ օրենքի 8-րդ հոդվածի 1-ին կետի պահանջները ԱԱՀ-ի հաշվարկներում չի ներառել հանգստյան տան մասով մատուցված ծառայությունների ԱԱՀ-ի 16.67 տոկոս հաշվարկային դրույքաչափով հարկվող գործարքները՝ ընդամենը 2278521 դրամ:

Արդյունքում նշված ժամանակաշրջանների համար իրացման շրջանառությունները պակաս ցույց տալու հետևանքով պակաս ԱԱՀ է հաշվարկվել ընդամենը 379829 դրամի չափով:

Համաձայն «ԱԱՀ-ի մասին» ՀՀ օրենքի 43-րդ, 43.1-րդ հոդվածի 1-ին մասի, «Հարկերի մասին» ՀՀ օրենքի 23-րդ և 25-րդ հոդվածների ԱԱՀ-ի գծով ենթակա է բյուջե վճարման ընդամենը 4.355.378 դրամ:

Ստուգման ակտով ոչ ռեզիդենտի շահութահարկի գծով լրացուցիչ առաջադրված պարտավորության վերաբերյալ նշվեց, որ Հիմնադրամը «Երեքնուկ» ՍՊԸ-ից (որը հաշվառված է ԼՂՀ-ում) հաշիվ-ֆարկտուրաներով կատարել է ապրանքների ձեռքբերումներ: Սակայն, հանդիսանալով հարկային գործակալ ոչ ռեզիդենտին վճարվող եկամտի ընդհանուր գումարներից աղբյուրի մոտ չի պահել (գանձել) շահութահարկ:

Հիմնադրամի ներկայացուցիչների պնդումներն այն մասին, որ որևէ կերպ տեղեկացված չեն եղել «Երեքնուկ» ՍՊԸ-ն ԼՂՀ-ում հաշվառված լինելու վերաբերյալ, ըստ էության, չեն կարող հիմնավոր համարվել, քանի որ թե կողմերի միջև կազմված հաշիվ-ֆարկտուրաների,

թե՛ հանձնման-ընդունման արձանագրությունների վրա դրված կնիքից պարզորեն երևում է, որ <Երեքնուկ> ՍՊԸ-ն հաշվառված է ԼՂՀ-ում:

Քննարկման ընթացքում արձանագրվեց նաև ստուգման ակտի 2-րդ կետում <Հարկերի մասին> ՀՀ օրենքի 24-րդ հոդվածից կատարված մեջբերման մեջ առկա տեխնիկական վրիպակ:

Ստուգման ակտով Հիմնադրամին պատկանող հանգստյան տան գծով լրացուցիչ առաջադրված պարտավորությունների վերաբերյալ նշվեց հետևյալը:

Հիմնադրամը, խախտելով <Շահութահարկի մասին> ՀՀ օրենքի 7-րդ հոդվածի 2-րդ մասի <բ> կետի պահանջը, 2010 թ-ի և 2011 թ-ի շահութահարկի հաշվարկներում համախառն եկամուտների կազմում չի ներառել հանգստյան տան մասով մատուցված ծառայությունների արժեքը: Բացի այդ, խախտելով <ԱԱՀ-ի մասին> ՀՀ օրենքի 8-րդ հոդվածի 1-ին կետի պահանջները ԱԱՀ-ի հաշվարկներում չի ներառել հանգստյան տան մասով մատուցված ծառայությունների ԱԱՀ-ի 16.67 տոկոս հաշվարկային դրույքաչափով հարկվող գործարքների շրջանառությունը:

Հիմնադրամի ներկայացուցչի պնդմամբ, հանգստյան տան մասով մատուցված ծառայությունների ԱԱՀ-ի գումարները ներառված են 20%-ով հարկվող շրջանառության մեջ, սակայն նշված պնդումը հիմնավորող որևէ ապացույց թե ստուգման ընթացքում, թե Հանձնաժողովին չի ներկայացվել:

Ի կատարումն Հայաստանի Հանրապետության կառավարության 2010 թվականի հոկտեմբերի 10-ի <Գանգատարկման խորհուրդ ստեղծելու և վերադաս հարկային ու մաքսային մարմինների գանգատարկման հանձնաժողովների որոշումների քննարկման կարգը հաստատելու մասին> N 1361-Ն որոշմամբ հաստատված կարգի 4-րդ կետի, սույն գործի վերաբերյալ Հանձնաժողովի կողմից ընդունված որոշման նախագիծը ուղարկվել է վերադաս հարկային ու մաքսային մարմինների գանգատարկման խորհուրդ (այսուհետ՝ Գանգատարկման խորհուրդ): Որոշման նախագծի վերաբերյալ Գանգատարկման խորհուրդը տվել է դրական եզրակացություն:

Ելնելով քննարկման արդյունքներից և ղեկավարվելով <Հարկային ծառայության մասին> ՀՀ օրենքի 43.1-րդ հոդվածի պահանջներով հանձնաժողովը

### ո Ր Ո Շ ՈՒ Մ Է՛

Ստուգման ակտը թողնել անփոփոխ:

Որոշմանը չհամաձայնվելու դեպքում տնտեսավարող սուբյեկտի ղեկավարը կամ նրան փոխարինող պաշտոնատար անձն իրավունք ունի բողոքարկել դատարան:

Հանձնաժողովի նախագահ՝



Տ.ԲԱՐՍԵՂՅԱՆ